Ալեքսանդր Ծատուրյան

Վերջին հանգիստ

Այնտե՞ղ, այնտե՞ղ, այն լայն դաշտում նվիրական աշխարհի,
Ուր հանգչում են սուրբ նշխարներ իմ նահատակ պապերի,
Ուր վեհ փառքով, կար ժամանակ, թնդում էին անվեհեր
Արիության, հաղթանակի հզոր երգ ու նվագներ.
Այնտե՞ղ, ուր, ո՛հ, այժըմ մենակ պատկառելին ծեր Մասիս
Տխուր, մըռայլ նայում է շուրջ, հիշում անցյալն ու լալիս
Ուր սգավոր մայր-Արաքսը լուռ քերելով յուր ափեր,
Արտասուքով ողողում է հայ քաջերի շիրիմներ...
Այնտե՛ղ, այն մե՛ծ դաշտի միջին՝ պապերիս հետ միասին
Կցանկայի և ես զոհված՝ գտնել հանգիստն իմ վերջին...

1890, 20 օգոստոսի